Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
----------ի N ----------Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գիտական կադրերի համապետական ատեստավորման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է 2026 թվականին գիտական պետական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ստորաբաժանումներում (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնների համար սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան գիտական կադրերի համապետական ատեստավորման և ճարտարագիտատեխնիկական պաշտոններ զբաղեցնելու համապատասխանությունը ստուգելու գործընթացի արդյունավետ և սահուն իրականացմանը:

2. Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298–Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Կազմակերպություններում գիտական կադրերի ատեստավորման կարգին և գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնների գնահատման համար սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան:

3. Ծրագիրը բխում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության հնգամյա ծրագրի՝ Գիտության բաժնի «Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» նպատակից և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Գիտություն» բաժնի 29-րդ կետի 29.2-րդ ենթակետից:

2. ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

4. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածին համապատասխան Կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ աշխատողի գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման հիման վրա՝ համաձայն տվյալ պաշտոնը բնորոշող չափանիշների:

5. Կազմակերպությունների կողմից Օրենքով սահմանված ժամկետում համապետական ատեստավորումն իրականացվել է 2021 թվականին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի N 935 որոշմամբ սահմանված գնահատման չափանիշներին համապատասխան (ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298–Ն որոշմամբ), որի արդյունքները հիմք են հանդիսացել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականը, յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ (այսուհետ՝ Բազային ֆինանսավորում) իրականացվող ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձի աստիճանական ավելացմանը՝ հասցնելով այն հանրապետության մասշտաբով պետական համակարգում համեմատելի և համադրելի արժեքների:

6. Հաջորդ համապետական ատեստավորումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին Որոշմամբ սահմանված նոր նվազագույն չափանիշներին, ինչպես նաև Կազմակերպության առանձնահատկություններով պայմանավորված իրենց կողմից սահմանված լրացուցիչ չափանիշներին համապատասխան, որի արդյունքները հիմք են հանդիսանալու Կազմակերպությանը հատկացվող ֆինանսավորման վերանայման համար:

7. Կազմակերպությունը, որը մինչև 2026 թվականն իրականացրել է Որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխան ատեստավորում, կարող են այն չիրականացնել 2026 թվականին:

8. Ծրագրի նպատակներն են՝

1) գիտական կադրերի ատեստավորման և գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնների գնահատման արդյունավետ համակարգի ներդրում.

2) գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում.

3) գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում:

3. ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9. Գիտական կադրերի համապետական ատեստավորումը, ինչպես նաև գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնների գնահատումն իրականացնելու նպատակով Կազմակերպության գիտական խորհրդի որոշմամբ հաստատվում է ներքին կանոնակարգ (այսուհետ՝ Կանոնակարգ):

10. Կանոնակարգով սահմանվող գործընթացը, ինչպես նաև գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոններին ներկայացվող բոլոր քանակական և որակական չափանիշները պետք է բխեն Որոշումից:

11. Կանոնակարգը կարող է ներառել նաև գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները զբաղեցնելու համար լրացուցիչ քանակական և որակական պահանջներ՝ պայմանավորված ոլորտի կամ Կազմակերպության առանձնահատկություններով, ինչպես նաև լրացուցիչ մանրամասն տեղեկություններ ատեստավորման ժամանակացույցի, ատեստավորման ենթակա աշխատողների ցանկը ձևավորելու, գիտական ստաժի հաշվարկի, տեղական և միջազգային դրամաշնորհների քանակի ու ֆինանսավորման ծավալի հաշվարկի վերաբերյալ և ատեստավորման առանձնահատկություններից բխող այլ տեղեկություններ:

12. Որոշման համաձայն ատեստավորում անցկացնելու նպատակով Կազմակերպության ղեկավարի հրամանով՝

1) սահմանվում է ատեստավորման անցկացման ժամանակացույցը, որի մասին ատեստավորման ենթակա անձինք տեղեկացվում են ատեստավորման անցկացման սկզբից առնվազն մեկ ամիս առաջ.

2) ստեղծվում է տվյալ բնագավառի կամ մասնագիտության, որպես կանոն, գիտության ոլորտում նշանակալի ավանդ ունեցող յոթ գիտնականներից բաղկացած ատեստավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով),

3) նշանակվում են Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

13. Այն կազմակերպություններում, որտեղ իրականացվում են երկու և ավելի բնագավառներով գիտական հետազոտություններ կարող են ստեղծվել մեկից ավելի Հանձնաժողովներ՝ ըստ գիտության բնագավառների:

14. Կազմակերպությունը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) է ուղարկում Կազմակերպության գիտական խորհրդի որոշմամբ հաստատված Կանոնակարգը և Կազմակերպության ղեկավարի հրամանով հաստատված ատեստավորման անցկացման ժամանակացույցը:

15. Ատեստավորվող աշխատողն ատեստավորում անցնելուց առաջ պետք է գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Համակարգ) ներմուծի ատեստավորման նախորդ գործընթացից հետո ընկած ժամանակահատվածում իր կողմից հրատարակված գիտական աշխատությունների ցանկը և գիտական գործունեությանը վերաբերող այլ փաստական նյութեր, որոնք Հանձնաժողովի քարտուղարի կողմից ներբեռնվելու են Համակարգից և ներկայացվելու Հանձնաժողովին:

16. Ատեստավորումն իրականացնելուց և վերջինիս արդյունքներն ամփոփելուց հետո դրանք մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ներմուծվում են Համակարգ, և համապատասխան տեղեկատվության թղթային տարբերակը ներկայացվում է Կոմիտե:

17. Կոմիտեն ստուգում է ստացված ատեստավորման արդյունքները և վերջիններիս համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Կազմակերպությանը:

18. Այն կազմակերպությունը, որն ատեստավորումն իրականացրել է 2024-2025 թվականների ընթացքում, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը Համակարգ է ներմուծում 2026 թվականի հաստիքացուցակի վրա հիմնված հաջորդ տարվա Բազային ֆինանսավորման ճշգրտված ծավալները, 2024-2025 թվականների ընթացքում իրականացված ատեստավորման արդյունքները, Կանոնակարգը և վերջիններիս թղթային տարբերակը ներկայացնում է Կոմիտե:

19. Կոմիտեն, հիմք ընդունելով ատեստավորման ճշգրտված արդյունքները, անհրաժեշտության պարագայում պահանջելով նաև Բազային ֆինանսավորման լրացուցիչ հայտ՝ 2027 թվականից Կազմակերպության Բազային ֆինանսավորումը տրամադրում է վերանայված ծավալներին համապատասխան:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

20. Ծրագրի իրականացման արդյունքում՝ կուրվագծվեն գիտության ոլորտում մասնագիտական աճի ճանապարհը և անհատական արդյունավետության չափանիշները, կվերանայվեն արդյունավետության բարձր պահանջներին համապատասխանող գիտական աշխատողների տարակարգման և, ըստ գիտական աշխատողների պաշտոնների անվանացանկի, Կազմակերպությանը հատկացվող ֆինանսավորումը, որն էլ իր հերթին կնպաստի գիտության առավել անարդյունավետ կադրերի փոխարեն խոստումնալից և հեռանկարային կադրերի ներգրավմանը, գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացմանը, գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի աշխատավարձերի, ինչպես նաև գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը: